

**Մ.Թ. ՆԱԶԱՐՅԱՆ, Ն.Ի. ՄԱՄՈՒԼՅԱՆ, Ա.Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
Ա.Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԱԳՐՈՏԵԽՆՈՊԱՐԿԻ ՍՏԵՂԾՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ
(Վանածոր)**

Դիտարկվում է Լոռու մարզում Ագրոտեխնոպարկի ստեղծման անհրաժեշտությունը՝ որպես մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման խթան: Բերված են առաջարկվող ագրոտեխնոպարկի կառուցվածքի առանձին բաղադրիչները և դրանց ստեղծման տնտեսական հիմնավորումը: Նշված են կանխատեսվող փոփոխությունները:

Առանցքային բառեր. նորարարություններ, ագրոտեխնոպարկ, մեքենատրակտորային կայաններ, մարքեթինգային ուսումնասիրություններ, աշխատանքի մեքենայացում, աշխատանքի արտադրողականություն:

Ներածություն. Տեխնիկայի և տեխնոլոգիաների առաջընթացի ժամանակակից պայմաններում ինովացիաները չեն շրջանցում որևէ ոլորտ: Որպես գյուղատնտեսության ոլորտում նորարարություններ ապահովող կառույց դիտարկվում է ագրոտեխնոպարկը: Աշխատանքի նպատակն է հիմնավորել Լոռու մարզում ագրարային տեխնոպարկ ստեղծելու գաղափարը:

Խնդրի դրվածքը և հիմնավորումը. Ագրոտեխնոպարկը նորարարական գործունեության բարդ ենթակառուցվածքային օբյեկտ է՝ ուղղված ագրարային գիտության ինտելեկտուալ ներուժի ինտեգրմանը և տարածաշրջանի ագրոարդյունաբերական ոլորտում ժամանակակից գիտական գաղափարների, տեխնոլոգիաների, կառավարման մեթոդների առաջխաղացման պայմանների ստեղծմանը: Ագրոտեխնոպարկն իր գործունեությունը ծավալում է նորարարական գործընթացի բոլոր փուլերում՝ գիտատեխնիկական արտադրանքի մշակում, փորձարկում, տնտեսական արդյունավետության ուսումնասիրում, արտադրական յուրացում և լայնածավալ իրացում:


Ագրոտեխնոպարկերն ուղղված են արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխմանը և, մասնավորապես, տնտեսապես առավել քիչ զարգացած շրջանները բարձր կենսամակարդակով գիտաարդյունաբերական գոտիների վերածմանը, թույլ զարգացած շրջանների տնտեսական զարգացման խթանմանը, խոշոր արդյունաբերական կենտրոնների և շրջակա միջավայրի միջև սոցիալ-տնտեսական անհամաչափությունների հաղթահարման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը [1]:

Հայաստանում գյուղատնտեսությունը տնտեսության գլխավոր ճյուղերից մեկն է: Ըստ ՀՀ կառավարության գործունեության հրապարակված արդյունքների՝ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածները կազմում են բնակչության ընդհանուր թվի 45%-ը, ինչը վկայում է, որ գյուղատնտեսությունը նաև սոցիալական մեծ նշանակություն ունի [2]: Ուստի անհրաժեշտ է մշտապես ժամանակի թելադրանքին համապատասխան նոր ծրագրեր մշակել գյուղատնտեսության զարգացման համար: Որպես գյուղատնտեսության ոլորտը բարելավող միջոց դիտարկվում է ագրարային տեխնոլոգիական պարկ համալիրի՝ ագրոտեխնոպարկի ստեղծումը: Գաղափարը նորույթ չէ, սակայն այն նոր է Հայաստանի, ինչպես նաև տարածաշրջանի համար: Լոռու մարզի Առևտրաարդյունաբերական պալատի կողմից առաջարկվում է ստեղծել ագրոտեխնոպարկ Լոռու մարզում, որի համար առկա են անհրաժեշտ պայմաններ՝ պոտենցիալ գիտական ներուժ և գործարանային տարածք, որը պատկանում է Վանաձորի «ՉինՎան» ՍՊԸ-ին: «ՉինՎան» մեքենաշինական ձեռնարկությունը աշխատում է փոքր հզորությամբ, և գործարանի ամբողջ հնարավորություններն արդյունավետորեն չեն օգտագործվում: Նախատեսված տարածքը վերանորոգելով և վերազինելով՝ հնարավոր կլինի այնտեղ ստեղծել ագրոտեխնոպարկ:

ՀՀ Լոռու մարզի տարածքային զարգացման տեսլականն է. 2025թ. Լոռու մարզը ունենա բազմաճյուղ, զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն, ՏՏ ոլորտ և զարգացած զբոսաշրջություն [3]:

Ագրոտեխնոպարկը կստեղծվի՝ նպատակ ունենալով գիտականորեն մեկնաբանել գյուղատնտեսության ոլորտում առաջացող խնդիրները, գտնել համապատասխան լուծումներ, նպաստել գյուղատնտեսության արդիականացմանը, միաժամանակ հնարավորություն տալ գեներացնելու տարբեր գաղափարներ, քննարկելու դրանք գիտաժողովների շրջանակներում:

Ստեղծվող ագրոտեխնոպարկի մեջ ներառվում են հետևյալ մոդուլները (նկ. 1):




Նկ. 1. Ագրոտեխնոպարկի մեջ ներառվող մոդուլները

Ագրոտեխնոպարկի մեջ ընդգրկվող մոդուլներից առանձնացնենք ՄՏԿ-երը, որոնց համար կատարվել են բոլոր անհրաժեշտ հետազոտությունները և հաշվարկները, ինչի հիման վրա էլ գրվել է բիզնես-պլան:

Հետազոտության արդյունքները. Նորարարական զարգացումներին ընդառաջ՝ Վանաձորի «ԶԻՆՎԱՆ» ՍՊԸ-ն առաջ քաշեց մի գաղափար, որի նպատակն է Լոռու մարզում թիրախային 3 շրջաններում հիմնել գյուղտեխնիկայի վարձակալության և սպասարկման կայաններ, որոնք հնարավորություն կտան ֆերմերներին գյուղատնտեսական աշխատանքներն իրականացնել՝ օգտագործելով համապատասխան գյուղտեխնիկա: Գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումը կնպաստի մշակվող հողատարածքների, այգիների հետագա ընդլայնմանը, և որպես հետևանք կառաջանա նոր աշխատուժի պահանջ: Մեքենատրակտորային կայանները (ՄՏԿ) նպատակ են հետապնդում տվյալ տարածաշրջանում իրականացնելու ինչպես գյուղատնտեսական արտադրության համալիր մեքենայացումը, այնպես էլ գյուղատնտեսական նշանակության տեխնիկական միջոցների սպասարկումը և նորոգումը, ինչպես նաև լուծելու պահեստամասերի, նավթամթերքի, պարարտանյութերի մատակարարման խնդիրները:

Լոռու մարզում ՄՏԿ-երի մարքեթինգային հետազոտությունների արդյունքում պարզվել է համայնքների բնակչության հետաքրքրվածության աստիճանը (նկ.2), ինչպես նաև գյուղտեխնիկայի այն քանակը որն անհրաժեշտ է այդ կայանների հիմնադրման համար (աղ.1) [3]:



Նկ. 2. Համայնքների բնակչության հեղափոխության աստիճանը ՄՏԿ-երի ստեղծման հարցում

Աղյուսակ 1

Ներդրման նկարագրությունը

Ծախսերի տեսակները (ԱՄՆ դոլար)	Կենտրոնների անվանումը		
	Սպիտակ	Թումանյան	Ստեփանավան և Տաշիր
Պահանջվող տեխնիկայի ձեռքբերում	781128	598179	700671
ՄՏԿ-երի կառուցման ծախսեր	102422	102422	102422
Ընդամենը	883550	700601	803093

Կատարած ուսումնասիրությունների արդյունքում որոշվել են յուրաքանչ-յուր տարածաշրջանի ցանքատարածության համար անհրաժեշտ մեքենասարքավորումների տեսակները և անհրաժեշտ խմբաքանակը:

Համաձայն «SWOT» վերլուծության՝ հստակեցվեցին ՄՏԿ-ի հիմնական և օժանդակ նպատակները և գործունեության քայլերի հաջորդականությունը [4]:

Հստակեցվել է ՄՏԿ-երի ստեղծման նպատակը, ըստ որի գյուղացին հողը կմշակի սահմանված ագրոկանոններով, իսկ աշխատանքները ձեռքով կատարելու դեպքում այն բավականին երկար կտևի:

Հողը ճիշտ մշակելու արդյունքում բերքը կլինի որակյալ: Հաշվարկները ցույց են տվել, որ աշխատանքի արտադրողականության ընդհանուր աճի 50%-ը ապահովվում է մեքենայացման հաշվին [5]:

Քանի որ առանձնացվեց ՄՏԿ-երի ստեղծման գլխավոր նպատակներից մեկը՝ արտադրողականության բարձրացումը, քննարկենք այդ ցուցանիշները և կատարենք համեմատություն՝ ձեռքի և մեքենայացված աշխատանքների արտադրողականությունների միջև:

Աշխատանքի արտադրողականության բարձրացման առաջին գլխավոր պայմանը հանդիսանում է տեխնիկայով գյուղատնտեսության հագեցվածության տեմպի արագացումն ու մակարդակի բարձրացումը: Գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության մակարդակը և դինամիկան (շարժը) որոշելու համար օգտվում են բնեղեն կամ արժեքային ցուցանիշներից:

Բնեղեն արտահայտությամբ աշխատանքի արտադրողականության ցուցանիշը կենդանի աշխատանքով ստեղծված տվյալ տեսակի արտադրանքի քանակի և դրա արտադրության վրա ծախսված աշխատաժամանակի հարաբերությունն է:

Գյուղատնտեսությունում աշխատանքի արտադրողականությունը բնութագրվում է լրիվ, ուղղակի, հակադարձ և անուղղակի ցուցանիշներով:

Աշխատանքի արտադրողականության ուղղակի ցուցանիշը որոշվում է (1)՝

$$U_{\text{ա}} = \zeta U / U_{\delta} , \quad (1)$$

որտեղ ζU -ն համախառն արտադրանքն է (բնամթերային կամ արժեքային արտահայտությամբ), U_{δ} -ն՝ արտադրանքի արտադրության համար կատարված աշխատանքային ծախսումները, մարդ/օր, մարդ/ժամ, միջին տարեկան աշխատողների թիվ:

Աշխատանքի արտադրողականության հակադարձ ցուցանիշը՝ աշխատատարությունն է:

ՄՏԿ-ի ստեղծման համար ուսումնասիրությունները կատարվել են Լոռու մարզի երեք տարածաշրջաններում՝ Սպիտակում, Թումանյանում և Տաշիր-Ստեփանավանում: Սպիտակի տարածաշրջանին բնորոշ մշակաբույսերի համար ձեռքի աշխատանքի արտադրողականության հաշվարկները ցույց են տալիս հետևյալ արդյունքները (աղ. 2):

Արտադրողականությունը կենդանի ուժի արտադրության դեպքում

Մշակաբույսի անվանումը	Մշակվող հողատարածքը, (հա)	Բերքատվությունը (1 հեկտարի համար)	Աշխատանքային ծախսումները, մարդ/ժամ	Աշխատանքի արտադրողականությունը
Գարի	2300	25	57,5	0,43
Հաճար	800	25	57,5	
Եգիպտացորեն	213	25	57,5	
Կարտոֆիլ	730	160	832	0,19

Աշխատանքի արտադրողականությունը և աշխատատարության ցուցանիշները կարող ենք հաշվել ըստ աղ. 2-ում բերված տվյալների.

1. Կարտոֆիլի համար կունենք՝

$$\zeta U = 730 \times 160 = 116.800 \text{ g/հա, իսկ } U_{\delta} = 730 \times 832 = 607.360 \text{ (մարդ/ժամ),}$$

որի դեպքում արտադրողականությունը (1) և աշխատատարությունը կարող ենք հաշվել՝

$$U_{\text{ա}} = \frac{\zeta U}{U_{\delta}} = \frac{116.800}{607.360} = 0,19 \text{ (հա/ժամ) և } U_{\text{տ}} = \frac{U_{\delta}}{\zeta U} = \frac{607.360}{116.800} = 5,2$$

2. Հացահատիկի համար (գարի, հաճար, եգիպտացորեն) կունենանք՝

$$\zeta U = (2300 + 800 + 213) \times 25 = 82.825 \text{ (g/հա), իսկ}$$

$$U_{\delta} = (2300 + 800 + 213) \times 57,5 = 190.497,5 \text{ (մարդ/ժամ),}$$

որի դեպքում արտադրողականությունը (1) և աշխատատարությունը կարող ենք հաշվել՝

$$U_{\text{ա}} = \frac{\zeta U}{U_{\delta}} = \frac{82.825}{190.497,5} = 0,43 \text{ (հա/ժամ) և } U_{\text{տ}} = \frac{U_{\delta}}{\zeta U} = \frac{127.732,225}{55.535,75} = 2,3:$$


Մեքենայացված աշխատանքների դեպքում ունենք հետևյալ արտադրողականությունները, որոնքը ևս հաշվարկված է այդ նույն մեթոդով (աղ. 3):

Արտադրողականությունը մեքենայացված արտադրության դեպքում

Աշխատանքի անվանումը	Մշակվող տարածքը (հա)	Օգտագործվող տրակտոր	Արտադրողականություն (հա/ժամ)	Աշխատանքի տևողություն/ժամ
Հացահատիկի դաշտեր				
Աշնանացան				
Վար	1904	Տրակտոր 80.4	0,65	2929
Կուլտիվացիա	1904	Տրակտոր 50.4	3,6	529
Ֆրեզա	670	Տրակտոր 40.4	2,2	305
Շարքացան	1904	Տրակտոր 40.4	1,8	1058
Հացահատիկի հավաք	1904	Կոմբայն	1,4	1360
Գարնանացան				
Վար	1409	Տրակտոր 80.4	0,65	2168
Կուլտիվացիա	1409	Տրակտոր 50.4	3,6	391
Ֆրեզա	493	Տրակտոր 40.4	2,2	224
Շարքացան	1409	Տրակտոր 40.4	1,8	783
Հացահատիկի հավաք	1409	Կոմբայն	1,4	1006
Կարտոֆիլի դաշտեր				
Վար	730	Տրակտոր 80.4	0,65	1123
Ցանող	730	Տրակտոր 40.4	1	730
Հանող	730	Տրակտոր 40.4	1	730

Հաշվարկները կատարվել են երեք տարածաշրջանների համար, և կատարվել է վերլուծություն, ըստ որի ենթադրվում է, որ ունենք միևնույն արտադրողականությունները 3 տարածաշրջաններում՝ ձեռքով աշխատելու դեպքում, քանի որ մշակվում են գրեթե նույն մշակաբույսերը, և աշխատանքները կատարվում են միևնույն սկզբունքով: Ստացված տվյալները վկայում են, որ աշխատաժամանակները (մարդ/ժամ) բավականին երկար են, ինչը չենք կարող ասել մեքենայացված աշխատանքի դեպքում:

Նկ. 3-ից պարզ երևում է, որ արտադրողականությունն աճում է մեքենայացված աշխատանքի դեպքում (30%):



Նկ. 3. Հացահատիկի մշակման արտադրողականությունը ձեռքով մշակելու և մեքենայացած աշխատանքի դեպքում

Ագրոտեխնոպարկի մեջ մտնող ՄՏԿ-ի մոդուլի օրինակով ցույց տվեցինք այս գաղափարի գլխավոր առավելություններից մեկը: Մյուս մոդուլները ևս ունեն առավելություններ:

Ագրոտեխնոպարկի մյուս մոդուլների ստեղծման համար ևս կատարվել են նախնական հաշվարկներ, որոնց արդյունքում պարզ է դարձել, որ ագրարային տեխնոպարկի ստեղծման համար անհրաժեշտ է մոտ 18 մլն ԱՄՆ դոլար: Ագրոտեխնոպարկի ստեղծման ներդրումային ծրագիրը ներկայացված է ՀՀ Կառավարությանը և հնարավոր ներդրողների՝ անհրաժեշտ աջակցության և ֆինանսական միջոցների ձեռքբերման նպատակով:

Ագրարային տեխնոպարկի ստեղծման արդյունքում հնարավոր կլինի ներքին շուկայում գյուղմթերքի պահանջարկն ապահովել տեղական արտադրության, էկոլոգիապես մաքուր արտադրանքով, միաժամանակ ավելացնելով գյուղմթերքի արտահանման ծավալները: Ապրանքների արտադրման և մատուցած ծառայությունների արդյունքում Լոռու մարզի սոցիալ-տնտեսական ոլորտը զգալիորեն կբարելավվի, կփոխվի ընդհանուր միջավայրը, շրթայական էֆեկտով զարկ տալով մի շարք ոլորտների զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <http://www.pro-consalting.ru>, Гусаков А.Г. Система агротехнопарков как основа развития агропромышленного комплекса РФ.
2. <http://report.gov.am/?id=4>
3. www.beneficiar-idp.ru. Наджарян М.Т., Оганисян Э.Н., Оганисян А.А., Микаелян А.А. Программа создания аренды сельхозтехники и станции обслуживания в регионе Лори РА. Бенефициар. -2017.- Вып. 17.
4. <http://www.mtad.am/files/docs/1775.pdf>
5. Հակոբյան Լ.Լ., Ճեպեճյան Շ. Ա. Գյուղատնտեսության էկոնոմիկա. Ուսումնական ձեռնարկ բուհերի համար.- Երևան: ՀՊԱՀ, 2012. -268 էջ:

**М.Т. НАДЖАРЯН, Н.И. МАМУЛЯН, А.А. ОГАНИСЯН,
А.А. АРАКЕЛЯН**

**НЕОБХОДИМОСТЬ И ЭКОНОМИЧЕСКОЕ ОБОСНОВАНИЕ
СОЗДАНИЯ АГРОТЕХНОПАРКА В ЛОРИЙСКОЙ ОБЛАСТИ**

Рассматривается необходимость и экономическое обоснование создания агротехнопарка в Лорийской области в качестве стимула развития сельскохозяйственного сектора в регионе. Приведены отдельные компоненты предлагаемой структуры и дано экономическое обоснование агротехнопарка. Отмечены прогнозируемые изменения.

Ключевые слова: инновации, агротехнопарк, машинотракторные станции, маркетинговые исследования, механизация труда, производительность труда.

**M.T. NAJARYAN, N.I. MAMULYAN, A.A. HOVHANNISYAN,
A.A. ARAQELYAN**

**THE NECESSITY AND ECONOMIC SUBSTANTIATION OF
ESTABLISHING AN AGROTECHNOPARK IN THE LORI MARZ**

The necessity and economic substantiation of creating an agrotechnopark in the Lori Marz is considered as a stimulus for the development of the agricultural sector in the region. The separate components of the proposed structure and the economic justification of the agrotechnopark are presented. The predicted changes are noted.

Keywords: innovations, agrotechnopark, machine-tractor stations, marketing researches, labor mechanization, labor productivity.

УДК 331

**Г.П. ГАГАРИНСКАЯ, И.Г. КУЗНЕЦОВА, А.В. ГАГАРИНСКИЙ,
А.В. ВАСИЛЬЧИКОВ, С.З. ДЫКИНА**

**ОРГАНИЗАЦИОННО-ЭКОНОМИЧЕСКИЕ АСПЕКТЫ
УПРАВЛЕНИЯ ТРУДОВЫМИ КОНФЛИКТАМИ НА
ПРОМЫШЛЕННЫХ ПРЕДПРИЯТИЯХ**

Показаны основные противоречия, возникающие в производственной сфере организации, которые впоследствии могут привести к возникновению конфликтной ситуации. Проведен мониторинг типовых противоречий, возникающих на производстве. Разработана схема управления трудовыми конфликтами в процессе выработки реализации конфликт-решения.

Ключевые слова: противоречия, производственная сфера, конфликты, промышленное предприятие, конфликт-решение.

В условиях постоянных изменений внешних и внутренних факторов причиной любых динамических изменений в организации являются человеческие ресурсы. Использование в производственном процессе способностей